**Հավելված 1**
**Քաջարան համայնքի ավագանու**
**27.04.2020թ. №23-Ա որոշման**

# ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՊՈՒՐԱԿՆԵՐԻ, ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ/ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ** |
| Մարզ | **ՍՅՈՒՆԻՔ** |
| **Համայնքը** | Քաջարան<br>ք.Քաջարան, Լեռնաձոր, Քաջարանց, Գեղի, Նոր Աստղաբերդ |
| **Համայնքի/բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | ք. Քաջարան 330 կմ / 25կմ<br>Լեռնաձոր 325 կմ / 21 կմ<br>Քաջարանց 333 կմ / 28 կմ<br>Նոր Աստղաբերդ 334 կմ / 29 կմ<br>Գեղի 332 կմ / 27 կմ |
| **Համայնքի/բնակավայրի բնակչությունը** | Համայնք՝ 8300<br>ք. Քաջարան՝ 7100,<br>Լեռնաձոր՝ 740, Քաջարանց՝ 220, Գեղի՝ 130, Նոր Աստղաբերդ 110 |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք/բնակավայր** | Սահմանամերձ<br>Բարձր լեռնային |
| **Համայնքի/բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն** | **Քաջարան**<br>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը համայնքային սեփականություն են: Ջրամատակարարման արտաքին ցանցի երկարությունը՝ 13կմ, ներքին ցանցինը՝ 18կմ: Վիճակը՝ բավարար: Ջրամատակարարումը՝ շուրջօրյա:<br>Քաղաքը գազաֆիկացված է: Բնակարանների 90%-ը միացված են համակարգին: Ցանցի վիճակը՝ լավ:<br>Էլեկտրական ցածրավոլտ բաշխիչ ցանցի վիճակը՝ բավարար:<br>Քաղաքը ոռոգման միասնական համակարգ չունի:<br>Քաղաքի բոլոր փողոցները լուսավորության համակարգեր ունեն: Լուսավորվածության աստիճանը՝ լավ: Լուսատուների 95%-ը լուսադիոդային են: 2020թ. մնացած բարձր ճնշումային լուսատուները ևս կփոխարինվեն լուսադիոդայինով:<br>**Լեռնաձոր**<br>Հեռավորությունը համայնքային կենտրոնից՝ 5 կմ: Գազաֆիկացված է: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգը ապահովում է անհրաժեշտի 80% -ը: Փողոցների լուսավորվածությունը՝ 50%: Այլ ծրագրերով 2020-21թթ նոր լուսավորության համակարգ կկառուցվի: Կենտրոնացված ոռոգման համակարգ չունի: Ոռոգումը իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>**Գեղի**<br>Հեռավորությունը համայնքային կենտրոնից՝ 25 կմ: Գազաֆիկացված չէ: Խմելու ջրամատակարարման համակարգով ապահովված է: Փողոցների լուսավորվածությունը՝ 50 %: Կենտրոնացված ոռոգման համակարգ չունի: Ոռոգումը իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>**Նոր Աստղաբերդ**<br>Նոր Աստղաբերդ վարչական շրջանի Գետիշեն գյուղի հեռավորությունը համայնքանին կենտրոնից՝ 27 կմ: Գյուղը գազաֆիկացված չէ: Խմելու ջրամատակարարման համակարգ ունի, որը սպասարկվում է համայնքապետարանի կողմից: Ոռոգման կենտրոնացված համակարգ չունի: Ոռոգում իրականացնում են բնակիչները՝ անհատապես:<br>Փողոցային լուսավորության համակարգի կառուցումը սկսվել է, կավարտվի 2019թ –ին: |

| | |
|---|---|
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը** | **Ծրագրի նպատակն է՝ ապահովել բարեկարգ և նպաստավոր ապրելու պայմաններ համայնքի բնակիչների համար**<br>**<u>Նախատեսվում է իրականացնել</u>**<br>1. **Պուրակի կառուցում Լեռնաձոր գյուղում, Քաջարան քաղաքի Բակունց և Աբովյան փողոցներում**<br>• Լեռնաձոր գյուղը բնակիչների հանգստի, երեխաների ժամանցի, խաղերի, միջոցառումների կազմակերպման համար պայմաններ չունի: Բնակիչները բազմաթիվ անգամ դիմել են համայնքի ղեկավարին՝ հանգստի համար նվազագույն պայմաններ ստեղծելու խնդրանքով: Բնակավայրի հեռավորությունը համայնքային կենտրոնից թույլ չի տալիս բնակիչներին օգտվել հանգստի, ժամանցի, երեխաների ֆիզիկական զարգացման համար քաղաքի ընձեռած հնարավորություններից:<br>• Քաջարան քաղաքի Բակունց և Լեռնագործներ փողոցների պուրակները տասնամյակներ շարունակ չեն վերանորոգվել, չեն ծառայում իրենց գործառնական նպատակներին, ոռոգման համակարգ չունեն, ինչի պատճառով կանաչ տնկարկները չորանում են:Կահավորանքը հին է, ֆիզիկապես և բարոյապես մաշված: Բակունց փողոցի պուրակի մակերեսը երկու անգամ կընդլայնվի այս ծրագրի արդյունքում<br>**2. Մարզահրապարակների վերակառուցում Քաջարան քաղաքի Տերյան և Շիրվանզադե փողոցներում**<br>• Քաջարան քաղաքը ունի մոտ 7100 բնակիչ և արդիական չափանիշներին համապատասխանող միայն մեկ՝ խառը տարիքային խմբերի համար կահավորված միջին չափի բակային մարզահրապարակ: Այն քաղաքի բոլոր բնակիչների, հատկապես՝ ցածր և միջին տարիքային խմբերի համար ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիություն չի ապահովում:<br>• Մարզադաշտերը 1980-ական թվականներին շահագործման հանձնվելուց հետո երբեք վերանորոգման չեն ենթարկվել: Չունեն անհրաժեշտ կահավորանք ու սարքավորումներ, ցանկապատերը քայքայված են և չեն կարող անվտանգություն ու հարմարավետություն ապահովել: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | 1. Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի, ժամանցի երեխաների զբաղվածության համար:<br>2. Պայմաններ առողջ ապրելակերպի կազմակերպման համար:<br>- քաղաքում ֆիզկուլտուրայով և մասսայական սպորտով զբաղվելու հնարավորությունների մեծացում:<br>- ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիություն ապահովում համայնքի ավելի շատ բնակիչների համար:<br>- տարբեր տարիքի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհա-տության ապահովում:<br>3. Բարեկարգ քաղաքային միջավայր: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | **<u>Նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները</u>**<br>• Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում<br>• Շինարարության թույլտվության տրամադրում<br>• Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում<br>• Հեղինակային հսկողության ծառայությունների պայմանագրի կնքում<br>• Շինարարության ընթացքում շինարարական, ծառայությունների մատուցման աշխատանքների որակի և ծավալի մշտադիտարկում<br>• Աշխատանքի վերջնական արդյունքի ընդունում և վճարում<br>**<u>Իրականացվելիք աշխատանքների ծավալները</u>**<br>1. **Պուրակի կառուցում Լեռնաձորում** **74004,4 հազ դր**<br>1. Տարածքի պլանավորում 1174 մ$^2$,<br>Արհեստական ծածկույթով եկու խաղահրապարակ 196,5 մ$^2$<br>Բետոնե սալիկներով անցուղիներ 485 մ$^2$<br>բազալտե եզրաքարի տեղադրում 331 գծմ<br>Ասֆալտե ծածկույթով ավտոկայանատեղի 139 մ$^2$<br>Սիզամարգ՝ 188 մ$^2$<br>Ծաղկանոց 58 մ$^2$<br>2. Մուտքի դեկորատիվ մետաղական դարպաս<br>3. Հենապատի վերանորոգում 125,3 մ$^2$<br>3. Պուրակի կահավորում ՝<br>ժամանցի շվաքարան, զուգարան, շատրվան, ցայտաղբյուր, դեկորատիվ ջրհոր, խաղասարքեր |

| | |
|---|---|
| | 2. **Պուրակի վերակառուցում Բակունց փողոցում - 77257,29 հզ դր**<br>1. Տարածքի պլանավորում 1977 մ$^2$,<br>Բետոնե սալիկներով անցուղիներ և ճեմուղիներ 900 մ$^2$<br>բազալտե եզրաքարի տեղադրում 477,3գծմ<br>ասֆալտե ծածկույթով ավտոկայանատեղի 133,5 մ$^2$<br>կանաչապատ տարածք՝ 909 մ$^2$<br>ծաղկանոց 5 մ$^2$<br>2. Նոր ծառատունկ 51 ծառ<br>3. Հենապատի երեսապատում 108 մ$^2$<br>4. Ջրամատակարարման և կոյուղու համակարգի կառուցում<br>3. Պուրակի կահավորում ՝<br>Նստարաններ՝ 62 հատ, աղբաման՝ 24 հատ, լուսատու՝ 42 հատ, ամբիոն, հուշարձան<br><br>3. **Պուրակի վերակառուցում Լեռնագործներ փողոցում 57031,61 հազ դր**<br>1. Տարածքի պլանավորում 1055 մ$^2$ (810 մ$^2$ + 245 մ$^2$)<br>բետոնե սալիկներով անցուղիներ 380 մ$^2$ (234,5 մ$^2$ + 145,5մ$^2$)<br>բազալտե եզրաքարի տեղադրում 273,6գծմ (180գծմ + 93,6գծմ)<br>ասֆալտե ծածկույթով ավտոկայանատեղի 225 մ$^2$<br>կանաչապատ տարածք՝ 236,6 մ$^2$(159մ$^2$ + 77,6մ$^2$)<br>4. Ջրամատակարարման, ոռոգման և կոյուղու համակարգի կառուցում<br>3. Պուրակի կահավորում ՝<br>Նստարաններ՝ 32 հատ, աղբաման՝ 17 հատ, լուսատու՝ 46հատ, ամֆիտատրոն-բեմ, ցայտաղբյուր, խաղասարքեր, մարզասարքեր, ժամանցի շվաքարան<br><br>**5. Մարզադաշտի վերակառուցում Շիրվանզադե փողոցում 48442,68 հազ. դր.**<br>1. Տարածքի պլանավորում, հողային աշխատանքներ 850 մ$^2$<br>Հենապատերի ուժեղացում, կառուցում 34,5մ<br>Ռետինե ծածկով խաղադաշտ 470 մ$^2$<br>Կանաչ պլանավորում՝ 235 մ$^2$<br>Անցուղիներ, աստիճանավանդակներ հանգստի գոտի 124մ$^2$<br>2. Դեկորատիվ ճաղավանդակ՝ մետաղական, h5,5մ*96գծմ<br>3. Ջրահեռացման համակարգի իրականացում<br>4. Լուսավորության համակարգի իրականացում 14 լուսատու<br>5. Կահավորում ՝<br>դարպաս՝ 2 հատ, նստարաններ՝փայտե՝ 12,7 մ$^2$,աղբամաններ՝ 6 հատ<br><br>**6. Մարզադաշտի վերակառուցում Տերյան փողոցում 58653,12 հազ դր**<br>11. Տարածքի պլանավորում, հողային աշխատանքներ 1039 մ$^2$<br>Հենապատերի ուժեղացում, կառուցում 100գծմ<br>Արհեստական խոտածածկույթով խաղադաշտ 520 մ$^2$<br>Ռետինե ծածկով խաղահրապարակ 175 մ$^2$<br>Կանաչ պլանավորում՝ 50 մ$^2$<br>Անցուղիներ, աստիճանավանդակներ հանգստի գոտի 241 մ$^2$<br>2. Դեկորատիվ ճաղավանդակ՝ մետաղական, h5,5մ*96գծմ<br>Դեկորատիվ ցանկապատ, մետաղական h ≈1,2մ*65մ<br>3. Ջրահեռացման համակարգի իրականացում<br>4. Լուսավորության համակարգի իրականացում 22 լուսատու<br>5. Կահավորում ՝<br>Ֆուտբոլի դարպաս՝ 2 հատ, նստարաններ՝փայտե՝ 8 հատ, շվաքարան, մարզասարքեր, խաղասարքեր,աղբամաններ՝ 6 հատ |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | Տարածքը, որտեղ պետք է վերակառուցման և կառուցման աշխատանքներ իրականացվեն, համայնքային սեփականություն է:<br>Կառուցված խաղահրապարակները, մարզահրապարակներն ու պուրակները կամրագրվեն համայնքին, որպես սեփականություն: |

| | |
|---|---|
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | **1. Պուրակի կառուցում Լեռնաձորում**<br>➢ Անմիջական շահառուները Լեռնաձոր գյուղի 440 բնակիչներն են, որոնք մինչ այժմ հանգստի և ժամանցի տարածք չունեն<br>**2. Պուրակի վերակառուցում Քաջարան քաղաքի Բակունց փողոցում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուներն են Բակունց փողոցի 620 բնակիչները<br>➢ Պուրակի չափերն ու նախատեսվող կահավորանքը թույլ կտա այն օգտագործել համաքաղաքային միջոցառումների բացօթյա ներկայացումներ, տոնական օրերի հանդիսավոր նշում, մանկական հանդեսներ և այլն կազմակերպման համար: Այս առումով շահառուներ են համայնքի բոլոր բնակիչները:<br>**3. Պուրակի վերակառուցում Քաջարան քաղաքի Լեռնագործներ փողոցում**<br>➢ Ծրագրի անմիջական շահառուներն են Լեռնագործներ փողոցի 1100 բնակիչները<br>➢ Պուրակը քաղաքի տարեց անձանց հանգստի հիմնական վայրն է. աշխարհի անցուդարձի բուռն քննարկումների ասպարեզ է:<br>➢ Այս պուրակի տեղադիրքը հարմար է նաև տարանցիկ զբոսաշրջիկների համար. մոտակայքում արագ սննդի,առևտրի ու սպասարկման բազմաթիվ կետեր կան<br>**4. Խաղահրապարակի վերակառուցում Քաջարան քաղաքի Շահումյան փողոցում**<br>➢ Միջոցառման անմիջական շահառուները Շահումյան փողոցի 4 և 6 շենքերի երեխաներն ու նրանց ծնողներն են: Շենքերի բնակիչների ընդհանուր թիվ՝ 210:<br>➢ Համայնքը կունենա գրավիչ և բարենպաստ քաղաքային միջավայր:<br>**5. Մարզադաշտի վերակառուցում Շիրվանզադե փողոցում**<br>➢ Ծրագրի ուղղակի շահառուները Շիրվանզադե փողոցի 590 բնակիչներն են:<br>➢ Ծրագիրը ազդեցություն կունենա նաև մոտակա Լեռնագործներ փողոցի 1100 բնակիչների վրա, ինչպես նաև քաղաքի այն բոլոր բնակիչների վրա, որոնք կցանկանան օգտվել մարզահրապարակի ընձեռած հնարավորություններից:<br>➢ Ծրագրի շահառու է նաև համայնքապետարանը. բակային սպորտային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունները սահմանափակ են, ինչը բացասաբար է անդրադառնում սպորտի զարգացման բնագավառում համայնքապետարանի կողմից իրականացվող քաղաքականության վրա:<br>**6. Մարզադաշտի վերակառուցում Տերյան փողոցում**<br>➢ Ծրագրի ուղղակի շահառուները Տերյան փողոցի 520 բնակիչներն են:<br>➢ Ծրագրի շահառու է նաև համայնքապետարանը. բակային սպորտային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունները սահմանափակ են, ինչը բացասաբար է անդրադառնում սպորտի զարգացման բնագավառում համայնքապետարանի կողմից իրականացվող քաղաքականության վրա: |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղերը** | Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աշխատուժի քանակը կսահմանվի նախագծանախահաշվային փաստաթղթերով: |

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

**Համայնքի 2019թ. բյուջեի կատարողականը (մլն. դրամ)**

| | *Պլանը* | *Փաստացին* | *Տոկոսը* |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 912, 75 | 912, 80 | 100 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 548, 41 | 548, 73 | 100 |
| *- Սեփական եկամուտներ* | 381, 16 | 381, 48 | 100 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 364, 34 | 364, 06 | 100 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 954, 65 | 867, 85 | 91 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 483, 50 | 481, 42 | 99,5 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 471, 15 | 386, 42 | 82 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 471, 15 | 386 426 046 | 82 |
| *- ճանապարհաշինություն* | 231, 60 | 192, 92 | 83 |
| *- նախադպրոցական կրթություն* | 26, 02 | 24, 97 | 96 |
| *- փողոցային լուսավորություն* | 9, 36 | 9, 36 | 100 |
| *- կանաչապատ փարածքներ* | 1, 23 | 1, 23 | 100 |
| *-վարչական ապարատ* | 10, 28 | 10, 28 | 100 |
| *-արտադպրոցական դաստիարակություն* | 10, 60 | 10, 60 | 100 |
| *-բակային տարածքներ և խաղահրապարակներ* | 83, 18 | 38, 24 | 46 |
| *-վերելակների ձեռք բերում /10 հատ/* | 93, 17 | 93, 17 | 100 |
| *-բժշկական սարքավորումների ձեռք բերում* | 2, 56 | 2, 50 | 97 |
| *-այլ մեքենաներ և սարքավորումներ* | 3, 11 | 3 ,11 | 100 |

**Համայքի ընթացիկ տարվա բյուջեն**

***Ընթացիկ տարվա բյուջեի պլանը՝ 541 340 000 /հինգ հարյուր քառասունմեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար/ դրամ****.*

| | *Պլանը* |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 541, 34 |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 416, 34 |
| *- սեփական եկամուտներ* | 220, 88 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 125, 00 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 416, 34 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 125, 00 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | 125 000 000 |
| -ճանապարհաշինություն | 25 000 000 |
| - ջրամատակարարում | 25 000 000 |
| -բակային տարածքներ և խաղահրապարակներ | 25 000 000 |
| -բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում | 50 000 000 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)**

**2020թ. համայքի բյուջեի ֆոնդային մասում առկա է 125,0 մլն դրամ:**

**Համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված և բարձր առաջնահերթությամբ ծրագրերը իրականացնելու համար, ծրագրային հայտերի հաստատման դեպքում, ծրագրի իրականացման համար ներդրում կատարելու պատրաստակամություն է հայտնել ՁՊՄԿ ՓԲԸ-ն:**

| | |
|---|---|
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | **315,389 մլն դրամ**<br><br>**Այդ թվում՝**<br>**- շինարարական օբյեկտների նախագծման աշխատանքների և նախագծերի փորձաքննության ծառայությունների ձեռք բերումը նվիրաբերության կարգով ֆինանսավորվել է մասնավոր հատվածի (ՀՊՄԿ ՓԲԸ և «Աժդանակ» ՍՊԸ) կողմից:**<br>**Այս գումարը ներառված չէ Ծրագրի ընդհանուր բյուջեի մեջ:**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 5,21 մլն դրամ,**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 1,56 մլն դրամ,** |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | **25,0 մլն դրամ (7,91 %)** |
| **Այլ ներդրողներ** | **132,742 մլն (42,09 %)** |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | **<u>Սկիզբը՝</u>** մայիս 2019թ. **<u>Տևողությունը՝</u>** 7 ամիս |
| **Ծրագրի ծախսերը** | Աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը կցվում են |
| **Ամսաթիվ** | **22 ապրիլի 2020թ.** |

Համայնքի տնտեսական պատասխանատու Գ. Գաբրիելյան


Հեռ 094629499
Էլ. Փոստ garegin_eko@mail.ru


Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան